



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Չինվորի երգեր

Քո սիրովն եմ միայն շնչում,
Ա'զգ իմ խղճուկ, տառապյալ,
Եվ քեզ արյան ահեղ դաշտում
Ես պատրաստ եմ հոգիս տալ:

Դու ես փառքը քաջ զինվորիս,
Փա՛ռք ու պարծանք ինձ համար
Օ՛, առանց քեզ կյանքը աչքիս
Ե՛վ մոայլ է, և՛ խավար:

Այն օրից, երբ թոթով լեզվով
Ես սուրբ անունդ հնչեցի,
Անտեր փառքիդ, մորըս ուխտով,
Ես շերմ պաշտպան գըրվեցի:

Այն օրից, ո՛վ ազգ՝ իմ թշվառ,
Քո գերության կուտ շղթան
Դարձավ կապանք և՛ ինձ համար,
Ցավ ու տանջանք անսահման...

Եվ ճնշում է հոգիս անհաղթ
Այդ կապանքը ստրկական.
Նա կոչում է ինձ դեպի դաշտ

Դաշտ բոցերի և արյան...

Քո սիրովն եմ միայն շնչում,
Ա'զգ իմ խղճուկ, տառապյալ
Եվ քեզ կովի ահեղ դաշտում
Ես պատրաստ եմ հոգիս տալ...

1887, 14 մարտի

II

Շողա՛, շողշողա՛, պողպատե իմ սուր,
Իմ անգին ընկեր.
Հալածված ազգիս դու խաղաղ կյանք տուր,
Եվ պայծառ օրեր...

Ճերի՛ք է որքան քեզ, իմ մտերի՛մ,
Սև ժանգը պատեց.
Որքան թշնամին ազգիս ոխերիմ
Քո ուժը ծաղրեց...

Թո՛ղ շար ոսխը քո ծայրով խոցված
Տապալվի գետին.
Թո՛ղ փայլե պըսակ՝ իմ արյամք գընված
Ազգիս ճակատին...

Շողա՛, շողշողա՛, պողպատե իմ սուր,
Ընկե՛ր հարազատ.
Դու ըստրուկ ազգիս նոր ուժ ու կյանք տուր
Եվ օրեր ազատ...

1890, 23 օգոստոսի